ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ապրիլի 2013թ. N-------Ա

## ՈՐՈՇՈՒՄ

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Երևան քաղաքում ավտոճանապարհ կառուցելու ներդրումային ծրագրի մասին» հ.1800-Ա որոշումը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

Տալ համաձայնություն՝ Արա Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 27.06.2005թ. հ.1963509 վկայական) տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող Երևանի Բուսաբանական փողոցի հ.11 հասցեում գտնվող 246.5քմ մակերեսով հողամասից 26.0քմ մակերեսով հողամասը հարակից տարածքում գտնվող Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 26.0քմ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Արա Մանուկյանին Բուսաբանական փողոցի հ.11 հասցեում սեփականության իրավունքով պատկանող 246.5քմ մակերեսով հողամասի 26.0քմ մակերեսով հողամասը փոխանակել կից գտնվող Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 26.0քմ մակերեսով համարժեք հողամասի հետ:

Հողամասերի փոխանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Արա Մանուկյանին Բուսաբանական փողոցի հ.11 հասցեում սեփականության իրավունքով պատկանող 246.5քմ մակերեսով հողամասից 26.0քմ մակերեսով հատվածը գտնվում է կառուցվող ավտոճանապարհին անմիջապես կից հարևանությամբ և հողամասերի փոխանակման արդյունքում հնարավորություն է ստեղծվում ավտոճանապարհի շինարարական աշխատանքների ավարտից հետո ունենալ քաղաքաշինական առումով առավել կանոնակարգված հատված և միաժամանակ լուծվում է նաև հարևանությամբ գտնվող հողամասերի ուրվագծերի և դիրքի կարգավորման հարցը:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը և նախատեսվող ավտոճանապարհի կառուցման անհրաժեշտությունը, հողամասի սեփականատիրոջ հետ տեղի ունեցած բազմաթիվ բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, որպես նշված հողամասի փոխանակում առաջարկվում է Բուսաբանական փողոցի հ.11 հասցեում գտնվող Արա Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող 246.5քմ. մակերեսով հողամասից 26.0քմ. մակերեսով հողամասը փոխանակել Երևան համայնքի սեփականություն հանդիսացող համարժեք հողամասի հետ:

Քննարկվող հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում են 6-րդ գոտում:

«Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Երևան քաղաքում ավտոճանապարհ կառուցելու ներդրումային ծրագրի մասին» հ.1800-Ա որոշման կատարումն ապահովելու հանգամանքով:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## «ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ